Ամփոփաթերթ

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (փաստաթղթային կոդ` Կ-272[28]-27.02.2018-ԱՀ-011/0), «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (փաստաթղթային կոդ` Կ-272[31]-27.02.2018-ԱՀ-011/0), «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (փաստաթղթային կոդ` Կ-272[35]-27.02.2018-ԱՀ-011/0) կատարված փոփոխությունների վերաբերյալ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | | *««Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք ճիշտ նշել համապատասխան օրենքի թիվը` ՀՕ-57-ՀՆ-08000-1:* | | *Ընդունվել է:* | Ընդունվել է |
| 2. | | *««Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջարկում ենք հանել Փաթեթից` հիմք ընդունելով այն հանգամանքը, որ շրջանառության մեջ է դրվել «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որտեղ կարգավորված է ««Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով բարձրացված խնդիրը:* | | *Ընդունվել է: Նախագիծը հանվել է:* | Ընդունվել է |
| 3. | | *««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «հետեւյալ բովանդակությամբ» բառերն առաջարկում ենք հանել` հիմք ընդունելով հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը:* | | *Ընդունվել է:* | Ընդունվել է |